

# ՅԱԻԵԼՈՒԱԾ

## ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխատասիրեց

ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍԻՄՈՆԵԱՆ

խմբագրում և ներածություն

ԴՈԿՏ. ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ

ՈՒՈՒԹՂԷՄ

1997

ՅԱԽԵԼՈՒԱԾ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

# Ն ԵՐԱԾԱԿԱՆ

Մեր գրույցը կը սկսի տարեսկիզբին երկու հարիւր հազար տղարի խոստումով Հայաստանի Ոսկեթաս գիւղին մէջ դպրոց մը կառուցանելու ազգանուէր նախաձեռնութեամբ իր մեկենասական կենսագրութիւնը հարստացուցած՝ հօրէ սասունցի և մօրէ այնթապցի Յարութիւն Սիմոնեանին Էնսիւնոյի բնակարանին մէջ, Գալիֆոնիա:

Տաւ մը ունի ան, և արդարութիւն ու դարման կը փնտռէ:

Այդ ցաւը սկիզբ առած է հրապարակ գալովը Երուանդ Պապայեանին խմբագրած Այնթապի պատմութեան երրորդ՝ մեծածաւալ հատորին<sup>1</sup>:

Սիմոնեանը կը պատմէ:

*Բացի հատորը և նախ ուզեցի տեսնել թէ ի՛նչ գրուած է մօրաքրոջս՝ քոյր Ֆիլոմէն Ժիրագոյին մասին: Ոչի՛նչ գտայ:*

*Թէ՛ Պապայեանը, թէ՛ Այնթապցիներու Մշակութային Միութեան վարչութեան ատենապետը և թէ՛ իր մեծարեալ մայրը լա՛ն կը ճանչնային քոյր Ֆիլոմէնը...:*

*Կը յիշեմ մեր հիղատանի օրերը: Մօրաքոյրս շաբաթը անգամ մը կ'այցելէր մօրս: Հիւղատանի բնակիչները իրարու լուր տալով կը խմբուէին մեր տան առջև և կարիքատուներ ու մասնատրաբար բժշկական խնամքի կարօտ մարդիկ կը սկսէին ներկայացնել իրենց թախանձանքը մօրս կամ քոյր Ֆիլոմէնին: Մայրս կը կատարէր միջամտողի դեր՝ բարիք ցանկալով իր շրջապատին: Համարեա ամէն անգամ մօրաքոյրս կը դառնար ու կ'ըսէր մօրս. «Մենո՛ւշ, ա՛յ ձանձրացուցիր զիս խնդրանքներովդ: Այլևս պիտի չայցելեմ քեզի:» Մայրս, սակայն, ամէն անգամ կը յաջողէր ողորել իր քոյրը,*

1- Պատմութիւն Անթէպի Հայոց, Գ. հատոր, գլխաւոր խմբագիր Երուանդ Պապայեան, հրատարակութիւն Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան, Լոս Անճելըս, Գալիֆոնիա, 1994, 1151 էջ:

ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



Մեհուշ Սիմոնեան

որ յաջորդող շաբաթներուն անպայման անվճար վիրահատական գործողութիւն կամ համապատասխան բժշկական խնամք կ'ապահովէր բարեխօսուած ենթականերուն:

Դեռ 1975-ի շրջանին, Գրիգոր Պողարեանը, վաստակաշատ հեղինակը «Այնթապականք» հատորներուն<sup>1</sup> և խմբագիրը **Նոր Այնթապ** պարբերաթերթին, առիթով մը դիմած էր ինձի՝ խնդրելով որ հանդիպում մը կազմակերպեմ իր և մօրեղբօրս միջև: Պողարեանը նպատակադրած էր գրել Այնթապի հայ կաթողիկէ քոյրերու մասին ուսումնասիրութիւն մը, սկսելով մօրաքրոջմէս, որ այդ շրջանին իր 85-ին թեակոխած՝ Լիբանանի բարձունքներէն մէկուն վրայ իր օրերը կ'անցնէր քոյրերու հանգստարանի մը մէջ:

Ի վերջոյ, բազմաթիւ հետապնդումներէ ետք, օր մը, մինչ Լիբանանը բռնուած էր քաղաքացիական պատերազմի արհաւիրքէն և գնդակներ կը սուլէին փողոցներու մէջ, յաջողեցայ մօրեղբայրս տանիլ Պողարեանին:

Բարտիի պէս ուղղաձիգ, մարզիկի կառուցուածքով Պողարեանը կարծէք աներակոյտ մը դարձած էր: Զարմանալի էր որ իր այդ վիճակով ան տակաւին կը շարունակէր արտադրել:

1- Այնթապականք, հատոր Ա., Այնթապցիներու տուրքը տպագրութեան, հայ մամուլին, հայ գրականութեան և հայ մշակոյթին, Պէյրութ, 1974, 260 էջ: Այնթապականք, հատոր Բ., Մահարձան - մահագրութիւններ, դամբանականներ և կենսագրական նօթեր, Պէյրութ, 1974, 750 էջ:

# Ա ՅՆԹԱՊԱԿԱՆ Յ ՈՒՇԻ Ծ ՈՒԷՆՆԵՐ

Ս իմոն Ս իմոնեանին գրիչով

# Մ ԵՐ ԴՊՐՈՑԸ ԳԵՏԱՓԻՆ...

Մա՛յր, յուսահատեր էիր ինձմէ, իմ չարութիւններէն: Որոշեցիր զիս դպրոց դրկել: Ես չնչին պայման մը դրի՞

- Զիո՛ւն վրայ...

Մե՛ր ձիուն վրայ, աշխարհի ամենէն գեղեցիկ ձիուն...

Հայրս համաձայն եղաւ: Ան աշխարհ եկած էր ինձի և քեզի համաձայն ըլլալու համար:

Ես առաջին օրը ձիուն վրայ գացի դպրոց:

Զէի գիտեր թէ ա՛յր օրը մեծագոյն երազն էր հօրս: Իր հայրենի գիւղը շատ հեռու չէր հայոց այբուբենը հնարողին ծննդավայրէն: Հետագային հայրս, իմ խնդրանքով, հաշուեց և գտաւ որ իր գիւղը քալելով վեց ժամ միայն հեռու է Հացեկացէն:

Երկա՛ր էր մեր դպրոցի ճամբան:

Կարծես քաղաքէն դուրս էր մեր դպրոցը:

Գետափին էր. գետակը հոն երկու ճիւղի կը բաժնուէր. մեր դպրոցը գետակի երկու ճիւղերուն մէջտե՛ղն էր, կղզիի մը պէս, թէ պարզապէս գետեզերքն էր, ուրկէ անդին գետակը կ'երկճիւղէր:

Ծառեր ու կանաչութիւններ ալ կը յիշեմ, որոնք փոքր պարտեզ մը կրնային լեցնել:

Զքնաղ դպրոց մըն էր:

Նոյնիսկ անունը կը հնչէ հեռուներէն, եթէ վրիպակ մը չէ՛ Նիկողոսեան: Հարուստ մարդու մը վիլլա՞ն եղած էր:

Թռչուններ կ'երգէին, մինչև հիմա կ'երգեն անոնք հոգիիս մէջ. կանաչութիւններ երանգ կը փոխէին հոն:

Հեռաւոր մանկութիւն:

Հայրս զիս վար առաւ ձիէն և յանձնեց ուսուցչուհիին ու մեկ-նեցաւ մեր ձիուն հետ: Ես շատ ցաւեցայ որ մեր ձին ինձի հետ պիտի չմնար դպրոցը: Լաւ կը ճանչնայի ուսուցչուհին, որ անցեալ տարի մեռաւ. Հոփսիսմէ էր անունը, Հոփսիսմէ կոչսին պէս գեղեցիկ. յաճախ մեր տունը կու գար կամ մենք յաճախ կ'այցելէինք իրենց: Ան ալ Տալորիկցի էր, Տալորիկցիի մը աղջիկը: Նշանուած էր Սասունցի ջաղացպանի մը հետ, Կարէ անունով, որ նոյնպէս Տալորիկցի էր, շատ գեղեցիկ կտրիճ մը, և կ'աշխատէր ջաղացքը: Կ'երգէինք, կ'արտասանէինք...

**ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

Օր մը մեր ձին դպրոց եկաւ, վրան՝ Կարէն:

Պատուհանէն տեսայ մեր ձին և Կարէն, բակին մէջ:

Կարէն շատ արագ նետուեցաւ ձիէն վար, հովին տալով իր սև և մետաքսահիւս *մեշլաֆը*, վազեց ներս մտաւ: Ետնէն հասան ուրիշ Սասունցիներ. ես ծնած օրէս կը զանազանեմ Սասունցիները ուրիշ մարդերէն. կը յիշեմ այդ Սասունցիներուն անունները՝ Կիրէն, Մկրոն, Մելէն, հօրս ջաղացքի ընկերները, բոլորն ալ իրենց յատուկ տարազներով:

Կարէն ըսաւ իմ ուսուցչուհիին, իր նշանածին.

- Աճապարէ՛, կոհիւր սկսաւ...

Ան շատ արագ դուրս եկաւ զիս գրկած, ուսուցչուհիին՝ մեր ետնէն, զիս նետեց ձիուն վրայ, սպա առաջարկեց իր նշանածին բարձրանալ ձիուն վրայ: Իմ ուսուցչուհին, որ շատ ճերմակ աղջիկ մըն էր, կաս-կարմիր եղաւ և մերժեց, ինչպէս կը մերժեն գեղեցիկ աղջիկները:

Միւս Սասունցիները, որ շրջապատեր էին մեզ, զայրացան Կարէին վրայ և Սասնոյ բարբառով հայհոյեցին անոր. ես ամենէն առաջ այդ հայհոյանքները սորված եմ Սասունցիներուն տարօրինակ լեզուէն, որ տարբեր լեզու մըն էր: Բայց ամենէն ծանր հայհոյանքները ըրաւ Մկրոն, որ ծակ-ծակ երեսներ ուներ. ան կարծես բոլորէն աւելի կը սիրէր զիս. Մկրոն բարկացաւ, իլեց սանձը Կարէին ձեռքէն, նետուեցաւ ձիուն վրայ, պինդ բռնեց զիս կործքին և քշեց...

Մեր ձին սուրաց. ան գիտէր սուրալու պահերը. Մկրոն գլուխը ծռեց մինչև ձիուն բաշերը և ծածկեց զիս կործքին տակ: Փամփուշտներ կը սուլէին:

Կարէն զի՛ս տանելու եկած էր, թէ նշանածը:

Ապա մեր ձին դանդաղեցուց քայլերը:

Կ'երևի թէ հասեր էինք ապահով թաղերը:

Մկրոն սպասեց քիչ մը: Միւս Սասունցիները, իրենց լայն *մեշլաֆ*ները հովին տուած, հասան մեր ետնէն մեծ քայլերով: Կարէն և նշանածը խուճիկ մէջ չէին. Կարէն տարբեր ճամբով տարած էր նշանածը, իմ ուսուցչուհին: Սասունցիները տարբեր ճամբով կը տանին իրենց նշանածները, նոյնիսկ երբ պատերազմ սկսի:

Մենք խուճիկով հասանք մեր տունը՝ անցնելով հայոց եկեղեցիին մեծ գառիվերէն, և Հէօյիք կոչուած թաղէն, ուր կը գտնուէր մեր տունը:

Մա՛յր, դուն արցունքներով կը սպասէիր մեզի՛ մեր թաղին ծայրը: Ուրախացա՛ր երբ լսեցիր մեր ձիուն ձայնը. մեր ձին կը վրնջէր ուժգին երբ հասնէր մեր թաղը. ան լաւ գիտէր մեր թաղը. հայրս ջաղացքէն դարձին երբեմն հեռուներէն կ'արձակէր զայն և

**ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

ան մինակ կու գար մեր տունը: Օ՛, մեր ձին, աշխարհի ամենէն գեղեցիկ, ամենէն խելացի կենդանին:

Մա՛յր, դուն արցունքներով զիս վար առիր մեր ձիէն և ամենէն շատ, ամենէն ուժգին այն օրը համբուրեցիր:

Մտանք խումբով մեր բակը:

Մկրոն մեր ձին կապեց թզենիին:

Աւելի ուշ եկան նաև Կարէն և նշանածը, Հոփիսիմէն:

Բոլորը սկսան խնդալ:

Միայն Հոփիսիմէն, իրմէ այնքա՛ն կը վախճայի ես, ինչպէս ծաղկոցի բոլոր ընկերներս, կաս-կարմիր եղած էր և կը նայէր գետինը՝ մեծ գորգին:

Մկրոն, մեր բանուորը, դեռ կը շարունակէր Սասնոյ բարբառով հայհոյել Կարէին...

Կարէն կը խնդար:

Երջանիկ էր:

Զի՛ս ազատելուն, թէ նշանածը:

**ՊԱՏԵՐԱԶՄ**

Մա՛յր, ի՞նչպէս կը սկսի պատերազմը:

Ես կը կարծեմ որ մանուկ մը դպրոց կ'երթայ գետակի մը ափին. թռչունները կ'երգեն, գետը կը խոխոջէ, ծառեր իրենց ճիւղերը իրարու կ'երկարեն, և յանկարծ, ձիաւոր մը կը մտնէ դպրոցին բակը՝ երկար մեշլաճով, շատ արագ կը գրկէ տղեկը, կը նետէ ձիուն վրայ և կը սուրայ...: Անոնց ետևէն կը սուլեն փամփուշտներ, ձիաւորը կը ծռէ գլուխը՝ փոքրիկ տղան պաշտպանելու...

Մա՛յր, ես յաջորդ օրերուն, մեր բակէն կը դիտէի մեր տան պատերը, երկրորդ յարկին վրայ, և կը համրէի հոն խրած կապարները: Առաջին օրերը կրնայի հաշուել զանոնք, բայց աւելի ուշ իմ գօրութիւնը չէր հասներ անոնց թուին: Դուն չէիր ձգեր բարձրանալ երկրորդ յարկը: Փամփուշտները կը տեղային: Աստիճաններէն սողալով կը բարձրանայինք երկրորդ յարկը: Այնուհետև մենք բնակեցանք առաջին յարկը, բակին առջև:

Սկսած էր պատերազմը:

Փակուած էր մեր դպրոցը:

Ես բոլոր ճակատներուն վրայ էի:

Ես, վե՛ց տարեկան տղեկ, շատ նիհար ու թուխ, մասնակցած եմ պատերազմին, որ կը կարծէի թէ վերջ պիտի չունենար...

Առաւօտուն կը փախչէի տունէն և երբեմն երեկոյեան միայն կը

**ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

վերադառնալիքի քրտնաթոր. նույնիսկ առանց կերակուր ուտելու կը նետուէի անկողին: Օ՛ր, ի՛նչ հրաշալի գիշերներ էին քունի մթին անտառներուն և քարայրներուն մէջ:

Մա՛յր, դուն շուարեր էիր և շատ կը վախնայիր որ կորսնցնես զիս, այնքան ուշ, այնքան դժուար գտնելէ ետք:

Առաջին օրերուն, պատնէշ բարձրացնողներուն մօտ էի: Պզտիկ քարեր կ'երկնցնէի վարպետներուն, որ զանոնք կը խրէին շաղախին մէջ երկու քարերուն:

Պատնէշները կը բարձրանային. կարծես ե՛ս կը բարձրացնէի զանոնք: Անել փողոցներ կը կազմուիին. մենք մեզ կը բանտարկենք, շերամի թրթուրներուն պէս...

Պատնէշներուն մէջ ծակեր կը ձգէին վարպետները:

Հրացանով մարդիկ կը նստէին այդ ծակերուն առջև:

Հրաշալի էին այդ ծակերը, ուրկէ կարելի էր դիտել աշխարհը, որ կը գտնուէր մեր պատերէն անդին: Կարծես երազի և երազուածի դուռ էր իրաքանչիւր ծակ: Ես այնքա՛ն կարօտցեր էի ինչ որ կը գտնուէր պատերէն անդին, ինչ որ կարելի էր տեսնել անոնց ծակերէն: Ամենէն շատ կարօտցեր էի գետափի իմ դպրոցը:

Երբեմն կը նստէի այդ զինուորներուն կողքին. անոնք իրենց հրացաններով աստեն աստեն կը կրակէին. չէի գիտեր որո՞նց վրայ: Մէկը չէի տեսներ: Երազի՞ մէջ տեսնուած բաներու վրայ կը կրակէին:

Երազ էր պատերէն անդին:

Պատնէշները, իրենց ծակերով, երբ դադրեցան հետաքրքրական ըլլալէ, սկսայ թափառիլ փողոցները և գտայ շա՛տ հետաքրքրական տեղ մը:

Ծատ ընդարձակ սրահ մըն էր, զստիվարին վրայ, մեր տունէն ոչ շատ հեռու: Հետագային պիտի իմանայի թէ Բողոքականներու ժողովարանն է:

Հոն էր մեր բարեկամը, նստած, մեծ սրահին բազմաթիւ գործաւորներուն մէջտեղ, և բան մը կը շինէր ինք և բաներ կը շինէին իր գործաւորները:

Տարօրինակ մարդ մըն էր մեր բարեկամը, սև ու խոշոր աչքեր ունէր, թաւ յօնքեր, հաստ պեխեր, բամբ ձայն, լայն ուտեր: Զօրաւոր, շա՛տ զօրաւոր մարդ մըն էր, որմէ սակայն ես չէի վախնար, որովհետև ան շատ կը սիրէր զիս: Կը նստէի իր կողքին և կը դիտէի ինչ որ կը շինէր ինք: Կը ժպտէր երբ ես խորասույզ կը դիտէի իր աշխատանքը. ժամերով չէի հեռանար իր կողքէն:

Կլոր, երկաթէ գունտեր կը շինէր: Իր շինածները այնքա՛ն նման էին, մա՛յր, մեր տան մեծ կշիռքի գունտին, *պարթմանին*: Դուն այդ կշիռքով կը կշռէիր ջաղացքէն հօրս դրկած ալիւրը, կշիռքին մէկ աչքին՝ ալիւրը, միսին՝ երկաթէ գունտը, *պարթմանը*: Ալիւր կը



ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

վաճառէիր մեր դրացիներուն, պատերազմէն առաջ և պատերազմի ընթացքին: Ամենէն թանկագին բանը այդ օրերուն, որով մայրիկներ իրենց տան բակերուն, սաճի վրայ, լաւաշ հաց կ'եփէին, որուն բոյրը ծաղիկներէն աւելի քաղցր էր, ա'յդ օրերուն...:

Ես առաւօտ մը, մա'յր, առանց քեզի բան ըսելու, վերցուցի մեր կշիռքին ծանր գունտը և գլտորելով (ե՛ս թէ գունտը) հասցուցի մեր բարեկամին մօտ:

- Ի՞նչ է այս,- զարմացաւ մեր բարեկամը:

- Ատոնցմէ,- ըսի իմ մատիկով ցոյց տալով իր շինած կլոր բաները:

Ժպտեցաւ մեր բարեկամը և ըսաւ.

- Տո՛ւն տար, թող մայրիկդ ալիւր կշռէ ասով:

Մա'յր, դուն անպայման ամբողջ օրը շատ փնտռեցիր *պաթմանը* և չգտար. հաւանաբար աչքի չափով ալիւր վաճառեցիր այն օր սխալներ գործելով քու կամ դրացիներուն հաշուոյն:

Մա'յր, ես կը խանգարէի հաշիւներդ:

Հետագային պիտի իմանայի շատ բաներ:

Պիտի իմանայի Ատրումիի բարձրագոյն թուաբանութենէն թէ մէկ *պաթմանը* հաւասար է 3.5 քիլոյի. այդքանը փոքր ծանրութիւն մը չէր վեց տարեկան տղեկի մը. մեր տունէն մինչև ժողովարանը, ուր կլոր բաներ կը շինէր մեր բարեկամը: Պիտի իմանայի թէ կլոր այդ բաները ումբեր էին, և մեր բարեկամը կը կոչուէր Աւետիս, ազգանունը՝ Գալէմքեարեան: Անիկա հերոս մըն էր, հերոսամարտին մեծագոյն դէմքերէն մէկը, զօրաւոր և հանճարեղ մարդ մը, որ եղած էր գիտարարը ձեռքի ումբերուն, որոնք հրաշքներ գործած էին հերոսամարտին, և զորս ան կը շինէր Բողոքականներու ժողովարահին մէջ, ուր նման «սրբապղծութիւններ» երբեք չէին գործուած նախապէս, այլ միայն երգուած էին «Ա'լ մօտ պիտի ըլլամ քեզի, Տէ՛ր», և նման երգեր: Հանճարեղ մարդ էր, բայց չէր գիտեր ալիւր կշռող *պաթմանը* ումբի վերածել և ուրախացնել տղեկ



*Հերոս Աւետիս Գալէմքեարեան*

**ՅԱԻԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

մը, զոր շատ կը սիրէր: Ան միաժամանակ մեծ արուեստագետ մըն էր, որ դեղին պղինձի վրայ սքանչելի քանդակներ կը գործէր: Անոր քոյրը ամուսնացած էր Սասունցիի մը հետ, Ղափլան (վագր) կոչուած, ան ալ Տալտրիկէն էր, մա՛յր, քու առաջին ամուսինիդ՝ Պետոյին գիւղէն, և անոր ազգականը. իր երկու մանչերը՝ Յակոբը և Լևոնը իմ խաղընկերներն էին. անոնց ալ մականունը Պէքիարեան էր, ինչպէս մերը և բոլոր Սասունցիներունը: Բոլորս ալ նոյն մականունը ունէինք՝ Պէքիարեան:

Հետագային անձամբ պիտի ճանչնայի պարոն Աւետիս Գալէմբեարեանը. բազմաթիւ գիշերներ պիտի ըլլայի իրեն հետ, իմ և իր բարեկամ պարոն Միհրանին տունը, ուր կու գար լսել դասական երաժշտութիւն, Պեթրովէն, Մոցարթ և այլ բազում երգահաններ, որովհետև դարձած էր անքուն մարդ, յաւիտենական անքուն. հերոսամարտէն ետք, առ նուազն երեսուն տարիներ, մինչև իր մահը, կորսնցուցած էր իր քունը գիշեր և ցերեկ, և կ'ըսէին թէ երբեք չէր հագած գիշերանոց: Անգամ մը, գիշեր մը միայն, կոպերը մէկ կամ երկու րոպէ գոցեց երբ կը նուագուէր «Քաւալըրի լէժէր»... Հերոսամարտի մը ձիարներուն արշա՛ւը թմբիր բերած էր իր խոշոր, սև ու մշտավառ աչքերուն... Յաւիտենական այդ անքունը շատ կը սիրէր լսել Պեթրովէնի «Իննէրորդ Սինֆոնիա»ն:

Մա՛յր, ես ձախորդ առևտրական և անժամանակ մարտիկ, ուրիշ սխալ մըն ալ գործեցի այդ օրերուն:

Օր մը, Այնթապի կոհներու բուն շրջանին, հայերը գրաւեցին թիրքական թաղ մը:

Թալան տեղի ունեցաւ:

Հայեր մտան գրաւուած թաղերը և սկսան կողոպտել:

Ես ալ մասնակցեցայ թալանին:

Թիրքեր փախեր էին: Ամաչացեր էին տուները:

Հայեր, այր, կին, երախայ, մեծ ու փոքր ապրանքներով դուրս կու գային տուներէն, թալանուած բաները՝ իրենց կոնակներուն, ձեռքերուն:

Թաղին ծայրը տեսայ Տալտրիկցի Յակոբը, կոնակին՝ շատ մեծ պահարան մը, հայելիապատ, ընկուզենիի փայտէն. հաւանաբար հարսանեկան պահարան մըն էր. Յակոբը պէտք ունէր ասոր. նոր ամուսնացեր էր մօրաքրոջս հետ:

Ես շարունակեցի յառաջանալ. մտայ մեծ բակ մը. շուրջը բազմաթիւ սենեակներ կային. մտայ սենեակներէն մէկը. պարպուած էր. անկիւնը տեսայ կարծառ մը. հայերէնի ամենէն գեղեցիկ և իմ ամենէն շատ սիրած բառերէն մէկն է ասիկա, որուն թիրքերէնն ալ գեղեցիկ է՝ *նեզիկ*: Հայաստանի Հանրապետութեան դրոշմաթուղթին վրայ կայ անոր նկարը:

**ՅԱԽԵԼՈՒԱՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

Եղէգէ պզտիկ *Աեզիկ* մըն էր, շա՛ր թեթև, շա՛ր նազիկ: Ծալկեցի և վազեցի մեր տունը:

Մեր թաղին ծայրը հանդիպեցայ Տալտրիկցի Յակոբին, որ դեռ կը շարունակէր քալել, կոնակին՝ պահարանը: Թիւրքերը շատ բան տարեր էին անոր հայրենի գիւղէն:

Յակոբէն առաջ մտայ մեր բակը:

Մա՛յր, դուն նստեր էիր մեր ձիուն կողքին և անոր համար գարին կը մաքրէիր. մեր ձին մաքրուած, հնարուած գարի միայն կ'ուտէր: Երբ տեսար զիս, ձեռքս կարժառը, զարմացար ու հարցուցիր.

- Ի՞նչ է այդ:

- Թալան,- ըսի:

- Ա՛յ տղայ,- ըսիր,- տունին ծանր բաները կը տանիս և ասանկ թեթև բաներ կը բերես: Իմ տղան *պաթմանը* կը տանի և *Աեզիկ* կը բերէ,- ըսիր,- խօսքդ ուղղելով անգոյ ունկնդիրներուն:

Իրապէս, մա՛յր, ես ծանր բաները տարած եմ և բերած՝ թեթև, շա՛տ թեթև բաներ: Իմ ժամանակը, իմ կեանքը, իմ մտքին բերքերը գացած են ուրիշներուն, իսկ թեթև, շա՛տ թեթև բաներ եկած են իմ կողմ...

Քիչ ետք Տալտրիկցի Յակոբը մտաւ բակի մեծ դռունէն: Բակին մէջտեղ դրաւ պահարանը՝ սրբելով քրտինքը: Հարսը, իմ մօրաքոյրը, մօտեցաւ և նայեցաւ ամենէն առաջ հայելիին. տեսաւ ինքզինք, ամբողջ հասակով... Տեսա՛ւ նաև քիթը. մօրաքրոջս քիթին ծայրը կերուած էր. ծանօթ վէրքը տարեր էր քիթին ծայրը՝ հետը տանելով գեղեցկութենէն բաւական բան:

Նոյն և յաջորդ օրերուն կը շարունակուէր պատերազմը:

Կ'երգուէր քայլերգը, ուր կ'ըսուէր թէ կը յարձակինք *պոմպա*-ներով:

Ափսո՛ս, իմ տարած *պաթման*ով *պոմպա* չէր շինուած, և ո՛չ ալ իմ բերած կարժառով մանած փաթթուած...:

**8 Յուլիս 1984, Անթիլիաս  
Արտատպում Նոր Այնթապէն**